ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 06 » հուլիսի 2021թ. № 034/27-1014

«ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
(ք. Երևան, Մաշտոցի 54ա
էլ. փոստ. alexandr.spy@mail.ru)

Ծանուցում

Պայմագիրը միակողմանի լուծելու մասին

Սպիտակ համայնքի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 06.05.2021թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը ստանձնում է կանաչապատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների», 1.2. կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով և բանավոր կերպով բազմիցս զգուշացրել է Ընկերությանը՝ ծառայությունը սահմանված ժամկետներում մատուցելու համար, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել ծառայությունը պատշաճ որակով և ժամկետներում մատուցելու ուղղությամբ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ «Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 06.05.2021 թվականին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/11 պայմանագիրը մնացորդային 3 590 450 ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն «Ինեկոբանկ» ՓԲԸ՝ տուժանքի մասին համաձայանագրերով սահմանված գումարները (672 000 ՀՀ դրամ և 448 000 ՀՀ դրամ) Սպիտակի համայնքապետարանի 900245161063 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր մարմին:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Արսեն Ավետիսյան